



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2007թ. մարտին /վերլուծություն/

2007թ. մարտին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 12565 գործարքներ, որոնց քանակը 2006թ. մարտի համեմատ նվազել է 0.2%-ով, իսկ 2007թ. փետրվարի համեմատ աճել՝ 29.5%-ով:

2007թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4933 օտարման գործարքների 86.0% կազմել են առուվաճառքները, 13.5%՝ նվիրատվությունները և 0.5%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 31.9%

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 35.7% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2007թ. մարտին, 2007թ. փետրվարի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 19.7%-ով, իսկ 2006թ. մարտի համեմատ՝ 12.1%-ով:

2007թ. մարտին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 66.9% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2007թ. փետրվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 8.4%-ով, իսկ 2006թ. մարտի համեմատ նվազել՝ 6.4%-ով:

2007թ. մարտին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

<i>Համայնքներ</i>	<i>Միջին գները /դրամ/</i>		
	<i>մարտ 2006թ.</i>	<i>մարտ 2007թ.</i>	<i>փետրվար 2007թ.</i>
Կենտրոն	361900	422800	415200
Արաբկիր	281200	330600	324000
Քանաքեռ-Զեյթուն	173800	239300	231700
Նոր-Նորք	161500	215800	205700
Ավան	143100	199400	191100
Էրեբունի	139500	208300	204200
Շենգավիթ	173000	222800	215200
Դավթաշեն	178300	228500	227400
Աջափնյակ	161400	214200	204300
Մալաթիա-Սեբաստիա	158500	199100	193700
Նուբարաշեն	101400	118800	117600
<i>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</i>	<i>184700</i>	<i>236300</i>	<i>230000</i>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. մարտին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. փետրվարի համեմատ աճել են 2.7%:

2007թ. մարտին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 565 բնակարաններ, որոնց քանակը 2007թ. փետրվարի համեմատ աճել է 20.5%-ով, իսկ 2006թ. մարտի համեմատ՝ 6.8%-ով:

2007թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

<i>Մարզեր</i>	<i>Քաղաքներ</i>	<i>Միջին գները /դրամ/</i>		
		<i>մարտ 2006թ.</i>	<i>մարտ 2007թ.</i>	<i>փետրվար 2007թ.</i>
Արագածոտն	Աշտարակ	58700	93000	90800
	Ապարան	24700	28500	28500
	Թալին	23300	33700	32400
Արարատ	Արտաշատ	43700	74700	71200

	Մասիս	53400	82600	80800
	Վեդի	37200	55100	53200
	Արարատ	38600	54600	52100
Արմավիր	Վաղարշապատ	77800	114600	112400
	Արմավիր	49100	82700	79100
	Մեծամոր	31600	53100	51100
Գեղարքունիք	Սևան	32900	54500	52100
	Գավառ	24100	33100	31600
	Մարտունի	37700	47200	46300
	Վարդենիս	19900	25500	25000
	Ճամբարակ	13600	14200	14200
Լոռի	Վանաձոր	44000	65300	64500
	Ստեփանավան	23400	32300	31900
	Սպիտակ	31600	42300	42300
	Ալավերդի	19600	23700	23300
	Տաշիր	19900	22900	22600
	Թումանյան	5200	5400	5400
	Շամլուղ	2800	3000	3000
	Ախթալա	10300	11600	11100
Կոտայք	Աբովյան	87600	132000	128200
	Նոր Հաճն	58900	92000	89100
	Բյուրեղական	40300	64500	61500
	Եղվարդ	54300	80000	80000
	Հրազդան	34700	45700	44900
	Ծաղկաձոր	70000	84500	80600
	Չարենցավան	38600	54000	52400
Շիրակ	Գյումրի	46600	61800	60600
	Արթիկ	29100	41500	40900
	Մարտիկ	21700	24100	24100
Սյունիք	Գորիս	49900	64800	62400
	Կապան	38300	58500	57400
	Սիսիան	30900	50600	48300
	Մեղրի	24600	35600	35600
	Ագարակ	18600	23300	23000
	Քաջարան	22800	29700	29700
	Դաստակերտ	6400	6800	6800
Վայոց Ձոր	Վայք	31700	54000	54000
	Եղեգնաձոր	49900	63900	63400
	Ջերմուկ	57500	98100	93600
Տավուշ	Դիլիջան	39200	61000	59200
	Իջևան	47600	79100	77000
	Բերդ	28200	33000	33000
	Նոյեմբերյան	15100	26900	26500
	Այրում	18000	18000	18000

2007թ. մարտին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. փետրվարի համեմատ աճել են 2.6%:

2007թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 587 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 122, մյուս մարզերում միասին վերցրած՝ 465: 2007թ. փետրվարի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 28.7%-ով, ընդ որում Երևանում՝ 69.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 21.1%-ով: 2006թ. մարտի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է

18.8%-ով, ընդ որում Երևանում՝ 4.3%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 23.3%-ով:

2007թ. մարտին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

<i>Համայնքներ</i>	<i>Միջին գները /դրամ/</i>		
	<i>մարտ 2006թ.</i>	<i>մարտ 2007թ.</i>	<i>փետրվար 2007թ.</i>
Կենտրոն	375600	432200	423800
Արաբկիր	293700	341200	337500
Քանաքեռ-Զեյթուն	176200	244500	235900
Նորք-Մարաշ	186000	219100	209500
Ավան	147500	203300	194500
Էրեբունի	144000	217000	207400
Շենգավիթ	176400	225800	218600
Դավթաշեն	181000	239200	230700
Աջափնյակ	165400	217800	207300
Մալաթիա-Սեբաստիա	161100	202700	196400
Նուբարաշեն	103900	121500	120500
<i>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</i>	<i>191900</i>	<i>242200</i>	<i>234700</i>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. մարտին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. փետրվարի համեմատ աճել են 3.2 % :

2007թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

<i>Մարզեր</i>	<i>Քաղաքներ</i>	<i>Միջին գները /դրամ/</i>		
		<i>մարտ 2006թ.</i>	<i>մարտ 2007թ.</i>	<i>փետրվար 2007թ.</i>
Արագածոտն	Աշտարակ	60600	97900	93100
	Ապարան	26000	32000	30500
	Թալին	24700	36700	34600
Արարատ	Արտաշատ	45100	77300	73300
	Մասիս	54400	86400	85100
	Վեդի	38200	58100	56600
	Արարատ	39600	57300	54700
Արմավիր	Վաղարշապատ	78700	117500	115900
	Արմավիր	50000	85400	81800
Գեղարքունիք	Սևան	38200	57300	54500
	Գավառ	25200	35800	33800
	Մարտունի	38600	50400	49400

	Վարդենիս	21500	29000	28700
	Ճամբարակ	14800	16700	16200
Լոռի	Վանաձոր	45200	69300	67300
	Ստեփանավան	26800	36300	35200
	Սպիտակ	33200	46800	45600
	Ալավերդի	20800	26900	25700
	Տաշիր	21400	25700	24400
	Թումանյան	6900	7500	7500
	Շամլուղ	4300	5000	4800
	Ախթալա	11900	13400	12800
Կոտայք	Աբովյան	89700	136700	133900
	Նոր Հաճն	60000	96200	92000
	Բյուրեղավան	41200	67600	64400
	Եղվարդ	55800	85700	84700
	Հրազդան	36100	49300	47500
	Ծաղկաձոր	70900	100200	93200
	Չարենցավան	39600	57100	55100
Շիրակ	Գյումրի	47700	65500	64300
	Արթիկ	30300	44200	43200
	Մարալիկ	23500	26900	26300
Սյունիք	Գորիս	51700	67600	65600
	Կապան	39800	62100	60900
	Միսիան	32300	53400	50600
	Մեղրի	26500	38600	38100
	Ագարակ	21100	26100	25400
	Դաստակերտ	8700	9400	9000
Վայոց Ձոր	Վայք	33100	58000	57700
	Եղեգնաձոր	51200	67800	67300
	Ջերմուկ	34400	46200	44400
Տավուշ	Դիլիջան	40200	63900	61800
	Իջևան	49700	82400	80800
	Բերդ	29100	35700	35400
	Նոյեմբերյան	15900	29000	28000
	Այրում	19200	19200	19200

2007թ. մարտին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. փետրվարի համեմետ աճել են 3.3%:

Ընդհանուր առմամբ, 2007թ. մարտին հանրապետությունում օտարվել են 1925 միավոր /1382.00 հա/ հողեր, որից Երևանում` 128 միավոր /18.01 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 121 միավոր /12.42 հա/ հողեր, որից Երևանում` 59 միավոր /7.17 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 965 միավոր /1258.88 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 602 միավոր /56.34 հա/, որից Երևանում` 73 միավոր /6.35 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 330 միավոր /58.48 հա/, որից Երևանում` 51 միավոր /9.21 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 22 միավոր /5.21 հա/, որից Երևանում` 4 միավոր, /2.51 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր` 2 միավոր /1.79 հա/,

- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 4 միավոր /1.40 հա/ ընդհանուր մակերեսով:

2007թ. մարտին հանրապետությունում օտարված հողերից 1790 միավորի /1308.40 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 122 միավոր /17.39 հա/, նվիրատվության գործարքներ՝ 120 միավորի /71.05 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.40 հա/ և փոխանակության գործարքներ՝ 15 միավորի /2.55 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.22 հա/:

Հանրապետությունում 2007թ. մարտին, 2006թ. մարտի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 21.1%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 15.8%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 34.0%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել՝ 24.1%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 360.15 հա, որից 352.09 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 35.9% կամ 642 գործարքներ /585.77 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 51 գործարքներ /8.45 հա/, իսկ 63.9% կամ 1143 միավորը /722.62 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 69 միավոր /8.94 հա/: 2007թ. հանրապետությունում գրանցվել են հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 5 գործարք /0.01 հա/:

Ստորև ներկայացվում է 2007թ. մարտին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	4	2.51	16	1.88	31	4.15	0	0.00	0	0.00	53	4.22	16	4.72
Արագածոտն	48	107.68	2	0.23	2	0.24	12	0.16	73	201.60	0	0.00	55	5.36	0	0.00
Արարատ	22	20.48	0	0.00	55	4.96	32	1.03	131	85.95	1	0.01	78	7.39	5	0.07
Արմավիր	55	166.31	5	1.27	0	0.00	12	0.17	117	185.79	0	0.00	62	6.12	6	0.50
Գեղարքունիք	14	14.11	2	0.11	3	0.36	17	1.96	25	14.00	0	0.00	21	2.20	4	1.22
Լոռի	1	2.60	2	0.06	1	0.12	21	4.03	55	30.02	0	0.00	13	1.46	10	0.53
Կոտայք	71	158.37	3	0.48	9	0.94	47	14.21	144	93.87	0	0.00	132	11.56	6	1.35
Շիրակ	9	8.21	0	0.00	25	1.50	22	1.11	26	31.96	0	0.00	14	1.33	0	0.00
Սյունիք	5	18.46	2	0.38	0	0.00	13	0.69	15	8.13	1	0.16	3	0.35	3	0.22
Վայոց Ձոր	13	30.60	0	0.00	2	0.12	26	9.91	9	4.42	0	0.00	6	0.62	1	0.01
Տավուշ	5	0.51	0	0.00	0	0.00	28	2.84	41	15.48	0	0.00	11	0.74	5	1.18
Ընդամենը	243	527.33	20	5.04	113	10.12	261	40.26	636	671.22	2	0.17	448	41.35	56	9.8

Ստորև ներկայացվում է 2007թ. մարտին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	35	6.70	4	2.42	6	0.56	25	3.72	16	1.74	0	0.00	0	0.00	10	1.31	6	0.43
Արագածոտն	3	0.232	2	0.23	0	0.00	1	0.002	61	108.08	48	107.68	0	0.00	2	0.24	11	0.16
Արարատ	5	0.01	0	0.00	0	0.00	5	0.01	104	26.45	22	20.48	0	0.00	55	4.96	27	1.02
Արմավիր	6	1.02	1	1.00	0	0.00	5	0.02	66	166.73	55	166.31	4	0.27	0	0.00	7	0.15
Գեղարքունիք	7	1.61	2	0.11	0	0.00	5	1.50	29	14.93	14	14.11	0	0.00	3	0.36	12	0.46
Լոռի	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.00	24	6.81	1	2.60	2	0.06	1	0.12	20	4.03
Կոտայք	11	0.81	2	0.28	0	0.00	9	0.53	119	173.19	71	158.37	1	0.20	9	0.94	38	13.68
Շիրակ	1	0.002	0	0.00	0	0.00	1	0.002	55	10.82	9	8.21	0	0.00	25	1.50	21	1.11
Սյունիք	3	0.88	2	0.38	0	0.00	1	0.50	17	18.65	5	18.46	0	0.00	0	0.00	12	0.19
Վայոց Ձոր	3	0.15	0	0.00	0	0.00	3	0.15	38	40.47	13	30.60	0	0.00	2	0.12	23	9.75
Տավուշ	7	0.05	0	0.00	0	0.00	7	0.05	26	3.30	5	0.51	0	0.00	0	0.00	21	2.79
Ընդամենը	82	11.47	13	4.42	6	0.56	63	6.48	555	571.17	243	527.33	7	0.53	107	9.55	198	33.77

Հանրապետությունում 2007թ. մարտին 2006թ. մարտի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 77.6%-ով: Ընդ որում Երևանում աճել է 5.3 անգամ, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 74.2%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 42.9%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 20.2%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 3.9 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 3.5 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. մարտին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	46	88.11	34.5	3000.0	661.8	32	16.84	362.2	6772.5	2505.2
Ապարան						6	3.99	90.6	767.6	358.2
Թային	2	19.57	33.9	104.2	69.0	25	169.20	90.6	758.5	366.5
Ծաղկահովիտ						2	2.23	77.0	948.2	164.2

Արարատի մարզ										
Արտաշատ	7	4.73	1063.4	2276.8	1923.9	53	20.07	335.1	5418.0	1358.6
Մասիս	8	3.10	47.0	1001.6	438.3	14	31.81	181.1	6772.5	1735.0
Վեդի	7	12.66	34.9	2248.1	675.2	64	34.07	203.8	4515.0	1160.9
Արմավիրի մարզ										
Արմավիր	17	93.01	15.1	521.3	126.9	36	56.72	294.3	4063.5	859.7
Բաղրամյան	10	32.19	35.4	191.6	51.1	28	98.86	90.6	677.3	541.4
Վաղարշապատ	28	41.11	35.4	1411.2	773.6	49	28.98	443.7	9030.0	1449.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						6	2.12	190.2	496.7	356.8
Ճամբարակ	3	0.30	144.0	144.0	144.0	6	1.68	45.3	541.8	143.2
Մարտունի						9	1.60	45.3	1806.0	468.7
Սևան						2	2.47	45.3	451.5	192.1
Վարդենիս	11	13.81	185.5	462.0	345.2	2	6.14	27.2	532.8	236.9
Լոռու մարզ										
Այվերդի						31	14.26	163.0	2483.3	1015.3
Գուգարք						7	1.15	226.4	2709.0	921.0
Սպիտակ						4	5.42	226.4	1490.0	504.1
Ստեփանավան						4	7.03	90.6	2257.5	354.1
Տաշիր	1	2.60	740.0	740.0	740.0	9	2.16	45.3	451.5	197.8
Կոտայքի մարզ										
Աբովյան	25	31.75	34.6	836.0	179.3	73	31.53	271.7	11287.5	3147.7
Եղվարդ	45	126.02	34.6	2029.4	306.9	62	34.82	172.1	11287.5	2228.3
Հրազդան	1	0.60	220.0	220.0	220.0	8	27.40	113.2	2709.0	862.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						20	15.59	249.0	1693.1	437.9
Ամասիա						3	14.57	36.2	237.0	108.1
Անի	9	8.21	77.2	1736.2	291.8	3	1.79	108.7	361.2	226.9
Աշոցք								45.3	112.9	114.3
Արթիկ								63.4	1083.6	164.5
Սյունիքի մարզ										
Գորիս						2	2.30	90.6	673.3	335.2
Կապան	5	18.46	199.3	356.1	230.7			54.3	841.6	220.1
Մեղրի						8	1.05	181.1	1784.2	446.9
Սիսիան						5	4.78	45.3	631.2	216.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	8.60	35.4	383.3	167.6	7	3.59	117.7	2524.8	1263.9
Վայք	8	22.00	19.6	143.9	50.8	2	0.83	54.3	1430.7	496.0
Տավուշի մարզ										
Բերդ						30	11.06	45.3	841.6	349.4
Իջևան	4	0.44	555.9	1260.0	818.5			240.0	1683.2	785.4
Նոյեմբերյան	1	0.07	2655.0	2655.0	2655.0	11	4.42	45.3	3509.5	496.1

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. մարտին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/				Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			
	Սրբավորների քանակը	Մակերեսը /քմ/	Սրբավորների քանակը	Մակերեսը /քմ/	Սրբավորների քանակը	Մակերեսը /քմ/	Սրբավորների քանակը	Մակերեսը /քմ/

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	2384.0	636.9	636.9	636.9	48	45979.0	113.2	3612.0	2236.1
Ապարան						2	2150.0	113.2	632.1	187.3
Թալին						5	5505.0	45.3	361.2	90.1
Ծաղկահովիտ								45.3	361.2	67.3
Արարատի մարզ										
Արտաշատ	22	22900.0	146.0	417.0	298.0	18	18316.0	135.8	2709.0	867.6
Մասիս	31	24670.0	634.0	689.6	656.3	38	31820.0	135.8	9030.0	1094.8
Վեդի	2	2000.0	190.0	190.0	190.0	22	23777.0	113.2	993.3	636.4
Արմավիրի մարզ										
Արմավիր						25	27670.0	135.8	2257.5	1030.4
Բաղրամյան								81.5	270.9	124.3
Վաղարշապատ						37	33530.0	135.8	4515.0	1390.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	2933.0	135.8	903.0	342.8
Ճամբարակ						1	1011.0	45.3	135.5	94.8
Մարտունի	3	3600.0	58.3	58.3	58.3	10	10152.0	90.6	451.5	220.1
Սևան						3	4198.0	90.6	903.0	138.2
Վարդենիս						3	3723.0	45.3	225.8	100.1
Լոռու մարզ										
Ալավերդի						5	6110.0	67.9	270.9	120.2
Գուգարք						6	6050.0	67.9	2347.8	524.1
Սյիտակ	1	1200.0	311.9	311.9	311.9	2	2450.0	63.4	451.5	118.3
Ստեփանավան								45.3	270.9	95.1
Տաշիր								45.3	135.5	68.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	9	9423.0	413.3	2420.9	2185.1	68	59201.6	135.8	6772.5	1678.1
Եղվարդ						56	47738.0	135.8	6772.5	1811.5
Հրազդան						7	7650.0	135.8	9030.0	1182.2
Շիրակի մարզ										
Ախուրյան	10	2840.0	1333.3	2750.0	2023.5	12	10634.0	113.2	1535.1	316.6
Ամասիա								45.3	135.5	68.5
Անի	1	2543.0	115.4	115.4	115.4			67.9	180.6	94.2
Աշոցք								40.8	135.5	56.8
Արթիկ	14	9660.0	29.4	429.8	182.7	2	2680.0	67.9	925.6	151.4
Սյունիքի մարզ										
Գորիս						1	634.0	67.9	541.8	225.2
Կապան								67.9	632.1	193.6
Մեղրի						1	1580.0	67.9	406.4	110.1
Միսիան						1	1250.0	67.9	406.4	132.3
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	1180.0	239.1	685.0	462.0	5	5080.0	67.9	1128.8	265.8
Վայք						1	1160.0	77.0	632.1	112.1
Տավուշի մարզ										
Բերդ								45.3	632.1	82.5
Իջևան						7	4346.0	67.9	1354.5	378.3
Նոյեմբերյան						3	2990.0	45.3	632.1	122.8

2007թ. մարտին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 2 գործարքներ 0.23 հա մակերեսով, ընդ որում 1-ը՝ Լոռու /0.03 հա/ և 1-ը՝ Սյունիքի /0.20 հա/ մարզերում:

2007թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 824 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.6%: Ընդ որում, վարձակալության գործարքների 42.1% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2007թ. մարտին 2007թ. փետրվարի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 15.7%-ով, իսկ 2006թ. մարտի համեմատ նվազել՝ 5.8%-ով:

2007թ. մարտին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 53 բնակարանների, 30 անհատական բնակելի տների, 329 հասարակական, 45 արտադրական նշանակության օբյեկտների, 358 միավոր /1361.64 հա/ հողերի և 9 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2007թ. մարտին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 32 վարձակալության գործարքների, այդ թվում 25 միավոր /0.29 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2007թ. փետրվարի համեմատ աճել է 2.1 անգամ, իսկ 2006թ. մարտի համեմատ նվազել՝ 3.0%-ով:

2007թ. մարտին հանրապետությունում վարձակալված 1361.64 հա հողերից 7.64 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1354.00 հա հողերի 5.24 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 8.00 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկային օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 354.40 հա, որից 353.75 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 595.80 հա հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2007թ. մարտին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	81	102.53
Արարատ	2	70.00	45	47.81
Արմավիր	0	0.00	7	64.68
Գեղարքունիք	3	255.80	10	14.16
Լոռի	2	270.00	17	4.55
Կոտայք	0	0.00	12	22.85
Շիրակ	0	0.00	18	17.11
Սյունիք	0	0.00	20	353.75
Վայոց Ձոր	0	0.00	5	3.43
Տավուշ	0	0.00	3	12.38
Ընդամենը	7	595.80	218	643.24

2007թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2049 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 16.3%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. փետրվարի համեմատ աճել է 44.0%-ով, իսկ 2006թ. մարտի համեմատ՝ 80.5%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /44.6%/, առանձնատների /27.0%/, հասարակական

նշանակության օբյեկտների /11.0%/ և հողերի /12.1%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 755 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. փետրվարի համեմատ աճել է 31.5%-ով, իսկ 2006թ. մարտի համեմատ՝ 26.5%-ով:

2007թ. մարտին հանրապետությունում գրավադրվել են 692.67 հա հողեր, որից 35.47 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 94.4% կամ 653.58 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 522.76 հա, որից 522.56 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2007թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 6 և 3 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2007թ. փետրվարի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը աճել է 50.0%-ով, իսկ 2006թ. մարտի համեմատ նվազել՝ 89.7%-ով: 2007թ. մարտին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են 22.2-ական%՝ Արարատի, Գեղարքունիքի, Սյունիքի, 11.1-ական %՝ Երևանի, Շիրակի և Տավուշի մարզերում:

2007թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2012 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2007թ. փետրվարի համեմատ աճել է 47.4%-ով, իսկ 2006թ. մարտի համեմատ նվազել՝ 12.2%-ով: Առաջնային գրանցումների տեսակաբար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.0%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /35.2%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն